

12708

891.71

9-34

05 FEB 2007

ԲԱՆՎՈՐԻ ՅԵՎ ԿՈԼԵՈԶՆԻԿ
ԳՐԱԿԱՆ-ԳԵ
ՀԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

891.71-38
2-34



Ա. Պ. ՉԵՆԵՊ

ՊԱՏՅԱՆԻ ՄԻՋԻ ՄԱՐԴԸ

ԱԶՈՎ-ՍԵՎԾՈՎՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ — 1936

ԲԱՆՎՈՐԻ ՅԵՎ ԿՈՒՆՈՋՆԻԿԻ

1948 թ.

05 FEB 2000
19 NOV 20

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

891.71

9-34

Ա. Պ. ՉԵԽՈՎ

Научная Библиотека
Тр при КГУ
КГУ Qarşıdağ
QULM KOTEXANQ

ՊԱՏՅԱՆԻ ՄԻՋԻ ՄԱՐԴԸ

Ա. Մ. ԼԻՆԻՆԻ

Ֆինադատական-կենսագրական ոչեբկով

Թարգմ. Հ. ԲՈՂԴԱՆՅԱՆ

ԱԶՈՎ-ՍԵՎԵՐՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ—1935

Ա. Պ. ՉԵԽՈՎ

(ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ-ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՈՁԵՐԿ)

Ճորտի Թոռ և մանր առևտրական-նպարավաճառի վորդի Անտոն Պավ-
լովիչ Չեխովը ծնվել է 1860 թվի հունվարի 29 (16)-ին, Տադանրոգում,
նավահանգիստ ունեցող վոյ օյնցան մեծ քաղաքում, Ազովի ծովի ափին։
Չեխովինց ընտանիքը սովորական մեղչանական ընտանիքներից եր. այդ
ընտանիքի կյանքում փոքր դեր չեյին խաղում զբաղման հաշիվներն
ու կրոնը։

Անտոն Պավլովիչն իր մանկության և գիմնազիական տարիներն
անցկացրեց Տադանրոգում։ Այստեղ եր, վոր առաջին անգամ նրա մեջ
զարթնեց զրականության և թափուների սերը։ Քաղաքի ու նրա առանձին
վայրերի, առևտրականորի, ուսուցիչների, չինովնիկների կյանքի պսա
վորություններն են, վոր նյութ են ծառայել Չեխովին՝ նրա մի շարք
գրվածների համար։

Չեխովը դեռ գիմնազիայում եր, յերը նրանց ընտանիքը Մոսկվա տե-
ղափոխեց, վորովհետև Չեխովի հոր առևտրական գործերը Տադանրոգում
վատացան։ Յիերը տարի շարունակ Անտոն Պավլովիչը մենակ եր ապրում
Տադանրոգում և մասնավոր դասերով նր հայթայթում իր ապրուստը։

1879 թվի աշնանը Չեխովը փոխադրվեց Մոսկվա ու մտավ համա-
լսարան, բշկական ֆակուլտետը։ Այս ժամանակից սկսած նա պետք է
ոգնեի նաև աժբողջ ընտանիքին, վորովհետև հայրն իսպառ ալքառացած։

Դեռ ուսանողական նստաբանից Չեխովը սկսեց աշխատակցել դանա-
ղան յերգիծաբանական ժուռնալներում։ Անցյալ դարի ութսունական
թվականները քաղաքական ծանր ճնշման, սեպտեմբրի և զրադննչական
անտոժոր հալածանքի տարիներ եյին։ Այդ թվականներին յերգիծաբա-
նական ժուռնալները (Բուդելնիկ, Ուկոլկի, Սաբեկոզս և այլն) բռնել



28736. 60

էյին մանր յերգիծանքի, անդոր ծաղրանկարներէ Եւդին. նրանք հետո
եյին ապրում իրենց քաղաքական ու հասարակական սատրելայից և աշ-
խատում եյին միայն նկարներով զվարճացնել ընթերցողին: Իսկ Անտոն
Պավլովիչն իր գրական գործունեութեան հենց առաջին քայլերից զար-
գացրեց իր մշ ռոտոր սանցուղարձի սուր ղխողութեան անկող ըն-
գունակութեամբ: Նա ուշադրութեամբ դիտում եր կենցաղային ամենա-
մանր յերևույթները: Արդեն այդ տարիներում նա իր առանձին պատ-
միածքներում շոշափում ե կարեւոր սոցիալական թեմաներ, բացասա-
կան կերպով գնահատելով ստորութեանը, կեղծիքը, ինքնավստահու-
թեանը, ստորաքաղաքութեանը, մեղանախանութեանը (քաղքենիութեանը).
Զեխովն, ինչպես Մ. Գորկին ե ասում, «արդեն իր առաջին պատմիածք
ներում կարողացավ ստորութեան աղտո ծովում հայտնագործել նույն
ստորութեան արագիկական առաջ կատակները»:

Արդեն «Վաղագույն» Զեխովի ստեղծած պատկերներում ցայտուն
կերպով յերևան եյին զայլա և յերեկութիւններ ընդհանրացնելու նրա
արտասովոր ռեալիստական շնորհք և բուռն վրդովմանք զգացումը՝ հան-
գեպ ուսական ստորաքաղաք և անարգ քաղքենիութեան, հանդեպ նրա
գարշելի, կեղծավոր, ստրկական հոգու: Բովական ե հիշել, վոր 80-ական
թիականներին ե գրել նա «Զինովիտիկ մահը» (1883), «Քամեկոն» (1884)
«Ունտեր Պրիշլիբսկը» (1885):

1885 թվից Զեխովի գրվածքները լույս են տեսնում «Պետերբուրգս-
կայա գաղետա» տարածված լրագրում, իսկ Զեխովի 1886 թվին լույս
տեսած «Պատարդեւտ պատմիածքներ» խորագրով գրքույնը արժանանում
ե ընդարձակ՝ դեպի հեղինակը բարձրագույն գրական քննադատութեան
«Նովոյե վրեյա» («Նոր ժամանակ») հետադեմ լրագրի հրատարակիչ՝
Մուրդրինի հետ ունեցած ծանոթութեան շնորհիվ Զեխովը հնարավորու-
թեան ունեցավ մեծ լրագրում տպվելու «Նովոյե վրեյայում» աշխա-
տելու առաջին տարիներում (1886—87) Զեխովը սպաւորում ե մի շարք
աեալիստական-կենցաղային պատմիածքներ, վորոնք աչքի յեն ընկնում
հոգեբանաբան ուժեղ անալիզով: Այդ պատմիածքներն իրենց վրա գրա-
վեցին Դ. Գրեգորովիչի, Ա. Պրիշլիբսկի, Վ. Կորոլենկոյի և այլ գրողների
ուշադրութեանը:

Զեխովի գրվածքներն առաջին անգամ բեմ տեսան 1887 թվին Մինչ
այդ Զեխովը շատ անգամներ զբաղվել և գրամատուրգիայով (Թատերու-
գրութեամբ), սակայն նրա վաղադույն գրամատիկական յերկերը մա-
ցին ձեռագիր, իսկ «Մեծ համբու վրա» մի արարվածով նրա պիեսը գրա-

քննիչն արգելեց: 1887 թվին Զեխովը բեմադրեց իր «Իվանով» սոցիա-
լական դրաման:

Իննսունական թվականներն իրենց հասարակական վերակենդանա-
ցումով, հարաճուն հեղափոխական արամադրութեաններով և բանվորա-
կան շարժման աճումով չեյին կարող չաշխուժացնել սոցիալական
մթնոլորտը, և Զեխովը, իրեն զգալուն գեղարվեստագործ, չեւ կարող չար-
տացուիլ այդ իր գրվածքներում:

Զեխովի մեջ զարթնում են նոր հայացքներ: «Ով վոր վոչինչ չի ու-
զում, վոչ մի բանի վրա հույս չունի, — ասում ե նա, — այդպիսին չի
կարող գեղարվեստագործ լինել: Նա կասկածում եր «մանր գործերի»,
ինչպես և Տուստոյի «Չարին չղիմադրելու» թեորիայի փրկարարութեան
մասին («Մեզոնիսով աունը», «Իմ կյանքը»): Նա ակտիվ մասնակցու-
թեան ե ցուցաբերում հասարակական կյանքում սովի և խռիւրայի դեմ
մղված պայքարում, ընդհանուր ժողովրդական մարդահամարում (1897
թվին), զարոցական շինարարութեան, ճանապարհների բարեկարգութեան
մեջ: 1890 թվին նա ճանապարհովում ե Սախալին կղզին. այնտեղ նա
ուսումնասիրում ե աքսորականների կյանքը և ցարական «արքաբաղա-
տութեան» դաժան մեթոդները մեղակացնող գիրք և գրում, 1898 թվին
Փրանսիայում Դրեյֆուսի գործի (պետական դավաճանութեան մեջ դուր
տեղը դատապարտված Ֆրանսիական հրջա-սպայի աքսորում) և նույն
գործի առթիվ «Նովոյե վրեյայի» հակասեմիտական զղվելի դիրք բու-
նելու կապակցութեամբ, Զեխովը խզում ե իր հարաբերութեանը Սու-
վորինի հետ: Ամենից ավելի հաճուցիքով նա տպվում ե լիբերալ (ազա-
տամիտ) «Ռուսոկոյե վեդոմոստի» թերթում, «Ռուսսկայա միսլ» ժուռ-
նալում և այլն:

Այդ տարիներում Զեխովն ստեղծագործում ե քաղաքական և սո-
ցիալ-հոգեբանական նշանակութեան ունեցող մի շարք խոր . ռեալիս-
տական յերկեր («Ձ 6 Իվանդասենյակը», «Ռոթշլիդի շութակը», «Մե-
զոնիսով աունը», «Մի դեպք պրակտիկայից», «Մուծիկներ», «Գրա-
կանութեան ուսուցիչը», «Իոնիչը» և ուրիշները): 1894 թվին «Ռուսո-
կոյե վեդոմոստի» լրագրում լույս ե տեսնում «Գրականութեան ուսու-
ցիչը», 1898 թվին «Ռուսսկայա միսլ» ժուռնալում տպվում ե «Պատ-
յանի միջի մարդը», 1899 թվին «Սեմյա» ժուռնալում — «Հոգի ջան»
պատմիածքը:

Տուրքերկուլյոզի դեմ պայքարը (այդ հիվանդութեան առաջին նշան-
ները Զեխովի մոտ յերևան յեկան 1886-ին) Զեխովին ստիպում ե շուտ-

շուտ փոխել իր բնակավայրը: 1892 թվին նա ապրում է Սերպուխովի գավառի Մեխիսովո կարվածքում, 1898 թվին նա տեխնիկում է Յալթա՝ ընտրվում է Գիտությունների Ակադեմիայի պատմավոր անդամ, իսկ 1902 թվին նա հրաժարվում է այդ կոչումից՝ յերբ Մաքսիմ Գորկին, նույնպես ընտրված լինելով պատմավոր ակադեմիկոս, ցարի հատուկ հրամանով զրկված եր այդ կոչումից՝ հեղափոխական շարժման մեջ մասնակցություն ունենալու համար:

900-ական թվականներին Չեխովը ստեղծագործում է ռեալիստական գարմանալի ուժեղ և բոցավառ յերկեր «Ձորակում» պատմվածքը և «Բալենու պարտեզը» պիեսը:

Չեխովի կյանքի վերջին տարիները սերտ կապված են թատրոնի համար նրա ունեցած աշխատանքի հետ: «Վորոբի» («Չայկա») խոշոր հանդուրժյունն առիթ տվեց Չեխովին նոր պիեսներ ստեղծագործելու, ինչպիսի «Ցերեք բույրեր» (բեմադրված է Մոսկվայի գեղարվեստական թատրոնում 1901 թվին) և «Բալենու պարտեզը»: «Բալենու պարտեզի» առաջին ներկայացումը (30 (17) հունվարի 1904 թվին), վոր զուգադիպեց Չեխովի 25-ամյա զբաղման գործունեության տարեթիվ արված մեծաբանքի հանդեսին, հեղինակի համար դարձավ բուռն հաղթանակի մի հանդես:

900-ական թվականներին Չեխովի աշխատանքը ծայրագույն գծվար պայմաններում եր անցնում. նրա առողջությունն օր-աօրվա վատանում եր, և նա չեք կարող լիովին նվիրվել ստեղծագործական աշխատանքին: 1904 թվին գարնանը նրա առողջական վիճակը կատաստրոֆիկ դարձավ: Իժիլներ խորհրդով Չեխովը բժշկվում եր Բադենվեյլեր կուրորտում (Գերմանիա), ուր և մեռավ 1904 թվին հունիսի 15 (2)-ին:

Չեխովը, վորպես գեղարվեստագետի, նշանակությունը շատ բարձր ե: Հակիրճ, սեղմ, ազդու ձևով գիտեր նա պատկերացնել սոցիալական նշանակություն ունեցող ամենաբարդ և տիպիկ պատկերներ ու յերեվություններ: Նովելլաների մեծագույն վարպետը, մի շարք հրաշալի պատմվածքների հեղինակը, նուրբ հոգեբանը, նա, վոր դրամատուրգիայի մեջ ել ստեղծել է իր հատուկ վաճը, գիտեր ապլ կյանքի ճշգրիտ և փալուռ նկարագրերը, մի նկարագիր, վոր սողորված է կյանքի խորաթափանց ծանոթությամբ ու հասկացողությամբ:

Չեխովի լեզուն նույնքան հարադատ է, հալիրճ և ազդու, վորքան

և թեթև, գեղեցիկ ու յերաժշտական ե: «Վորպես ստիլիստ» (վոճաբան) Չեխովը անհասանելի յե, — դրում է նրա մասին Մ. Գորկին, — և զբաղանության ապագա պատմաբանը, խոսելով ուսաց լեզվի զարգացման մասին՝ կասի, վոր նայդ լեզուն ստեղծել են Պուշկինը, Տուրգենևը և Չեխովը:

Մակայն Չեխովի նշանակությունը բացառապես զբաղման արժանիքներով չի սպառվում:

Մենք գիտենք, վոր Չեխովը իր հայացքներով մարքսիստ չեք. նա պարփակված եր լիբերալ և բուրժուական-դեմոկրատական շրջանակներով. նա վոչ բավականաչափ պարզ կերպով եր բմբռնում, վոր կոպտություն, վայրենություն և անմոտության (վորոնք միշտ վրդովում էյին նրան) պատճառներն արմատանում են մասնավոր սեփականատիրական, կապիտալիստական սխտեմի հիմունքներում:

Մակայն մեղ համար չափազանց կարևորն ու արժեքավորն այն է, վոր նա իր սոցիալական ներազդացություն և բացառիկ ռեալիստական ձիրքի շնորհիվ, հաճախ կարողանում եր դուրս գալ իր միջավայրից, կարողանում եր բմբռնել ստորության նշանակությունը և պատկերել այն վորպես ցարական Ռուսաստանի շահագործող դասակարգերի տիրապետության ամենագարշելի տրտահալությունը: Ահա այս Չեխովը, Չեխովը՝ վորպես ճորտատիրության թշնամին, վորպես նրա դաժանություն, քաղքենիական քարացածության թշնամին, Չեխովը, մեղշանական կեղծավորության և տգիտության այդ բնաշինջ անողը, բյուրեղկատա: կան ցարական ուժիմը բուռն կերպով առողը և ամբողջ հոգով դեպի ապագա գեղեցիկ և իմաստուն կյանքը ձգտող այդ Չեխովը մեր հաստատուն և ուժեղ դաշնակիցն է:

Իր, ըստ յերևույթին մեղմ տոնով զրված պատմվածքներով, վորոնք մերկացնում են մեղշանական կյանքի գարշելիությունը և դատարկությունը, Չեխովը անաղին ազդեցություն է գործում մեր վրա: Նա մեղ ոգնում է ճանաչել մեղշանականության մնացորդները մեր իսկ մեջ և պայքարել դրանց դեմ: Չեխովը, — դրում եր Ա. Վ. Լուսնաչաբսկին, — աշխատեց և մեռավ այլ պարագաներում (քան թե մենք), բայց և այնպես նա հաճախ հարվածը հասցնում եր այն ճիվաղներին զլիին, վորոնք տակավին պաշարում են մեզ: Չեխովի ծեծաղը և՛ այսօր, խորհրդային պայմաններում, խփում է կապիտալիզմի վողորմելի մնացորդներին, այն կապիտալիզմի, վորը ջախջախված է, բայց վերջնականապես չի վոչնչացված:

1 Նովելլա — փոքրիկ պատմվածք:

Չխտովյան պատկերներն իրենց գունեղ գեղարվեստականությամբ, տիպիկությամբ և ռեալիզմով հսկայական ներգործական ուժ են պարուհանում իրենց մեջ: Ահա ինչու, կոմունիզմին թշնամի մարդկանց ու յեթուութիւնների դեմ մղվող պայքարում, Վ. Ի. Լենինը՝ և Ի. Վ. Ստալինը շատ անգամ դիմել են Չխտովի գեղարվեստական պատկերներին, վարպետրին ոգտագործելով նրանք հեղափոխական նպատակների համար:

Վլադիմիր Իլիչն ավելի հաճախ հիշում էր «Պատյանի միջի մարդը» Խառնվածքը: Լենինի գրվածքներում մոտ յեկու տասնյակ համեմատություն կա պատմածի միջի մարդու պատկերի հետ: Չխտովի «Պատյանի միջի մարդը» պատմվածքը տպագրությամբ լույս է տեսել 1898 թվին ու արդեն 1901 թվին, «Ներքին տեսություն» հոգվածում, ռեակցիոներների մասին Լենինը գրում էր. «Հիանալի կերպով ներծծելով ստորաքարշության և գործի նկատմամբ թղթիդեն վերաբերմունքի այն վոզին, զոր թագավորում է ուսու չինովնիկության յերարխիաներում¹, նրանք կասկածանքով են վերաբերվում այն բոլորին, զորոնք նման չեն Գոլյի Ակակիյ Ակակիյեվիչին, կամ՝ ավելի ժամանակակից համեմատությունը գործածելով՝ պատյանի միջի մարդուն²:

Քաղաքական հասկացողությամբ, այդ չնչին չինովնիկի՝ ուսուցիչ Իեկիովի պատկերը Լենինի մոտ ընդունում է մի ընդարձակ, բայց և շատ կոնկրետ տատրական նշանակություն: «Պատյանի միջի մարդիկ» է անվանում Լենինը կողեաներին «Դումայի մոտավորտ ցրումը և տակտիկայի հարցերը» հոգվածում³:

«Բայց կողեաների քաղաքականությունը, դա, իսկապէս, անորինակ մի բան է: Ասել՝ հայտնում եմ տնխտանություն» — անգղուշ բան է: Պեսք է պահպանել Դումայն Ասել՝ վխտանություն» չեմ հայտնում,՝ այդ կարելի չէ: Դե, միթե սրանք քաղաքական «պատյանի միջի մարդիկ» չեն: Միթե սրանք Ֆիլիստերներ⁴ չեն, զորոնք՝ անխտափելիորեն մոտեցող փոթորիկի հանդեպ՝ աչքերի վրա յեն քաշում իրենց գիշերային թասակները և կրկնում են՝ մենք զգուշ ենք... մենք պահպանում ենք... Դուք պահպանում եք ձեր Ֆիլիստերային թասակը, և ուրիշ վոչինչ, «ժողովրդական աղաատության» պատմական ասպետներ»:

Կողեաների համեմատությունը «պատյանի միջի մարդու» հետ մենք գտնում ենք նաև «Դումայն և բյուշիկ հաստատումը» հոգվածի մեջ, ուր կողեանական գործիչ, Ֆինանսիստ, բյուրոկրատ Ն. Ն. Կուտլերի թեկնածության առթիւ, Վ. Ի. Լենինը գրում էր. «Ժողովրդին համարտությունը բացատրելու փոխարին, նրանք (կողեաները՝ Ա. Լ.) քնացնում են ժողովրդի ուշադրությունը, դիտմամբ տուշ քաշելով Կուտլերի նման գրասենյակային պատյանի միջի մարդկանց»:

Իթամիտ, ռեսլ դասակարգային և քաղաքական շահերն ըմբռնելուց հետու, կյանքի հետ հաշիվ չտեսնող, իրենց սեփական նախապաշարումների պառլանի մեջ փակված մարդիկ Լենինը շատ հաճախ անվանում է «պատյանի միջի մարդիկ»:

«Նրանք բավականանում են, — կարծես և՛ ճիշտ վոր «պատյանի միջի մարդիկ» են դառել, — մեւամաղձոտ խոտակցությամբ...» — գրում է Լենինը մենշևիկ-նովիսկրովեցիների մասին⁵:

Չխտովյան դասական տիպերին դիմելու այս բոլոր փաստերի մեջ նշանավորն այն է, զոր Վ. Ի. Լենինը գիտե գրական պատկերն ստորադասել պրոլետարական հեղափոխության պրակտիկայի շահերին, գրական պատկերը հաղեցնել խորունկ քաղաքական իմաստով և յերգիծական շախմատիչ ուժով:

Պարադանելով Գ. Վ. Պլեխանովին ու նրա կողմնակիցներին «պետք չէր զենքի դիմել» ոպորտունիստական դավաճանական լոգունդի համար, Վլադիմիր Իլիչը, Կ. Մաքսի Լ. Կուգելմանին գրած նամակի ուստերեն թարգմանության առաջաբանում գրում էր այն մասին, թե վորքան բարձր էր զնահատում Մաքսը «մասսաների պատմական ինիցիատիվը (նախաձեռնությունը)»:

Ո՛ր, ինչպէս այն ժամանակ Մաքսի վրա կծիծաղելին մարքսիստների շարքին պատկանող մեր աշմայն «Ռեսլ» իմաստունները, զորոնք 1906—1907 թ. թ. Ռուսաստանում տարածում էլին հեղափոխական ումանտիկան ինչպէս ծաղր ու ծանակի կենթարկելին մարդիկ մատեսելի ստիկն, տնտիստ գետիկն, ուտոպիստներ թշնամուն, զորը խոնարհում է յերկն քի վրա գրոհելու «փորձի» առաջ: Վորքան արցունք, նորոգմիտ ծիծաղ կամ ցավակցություն կթափելին ամեն տեսակ պատյանի միջի մարդիկ բուհտարական տենդենցների, ուտոպիզմի և այլնի և

¹ Ֆերարիսիա — այստեղ նշանակում է պաշտոնի աստիճաններ (Մ. Թ.)

² Վ. Ի. Լենինի, Յերկերի ժող. հատ. IV, էջ 316.

³ Նույնը, XI, էջ 28—29

⁴ Ֆիլիստեր — սահմանափակ հասկացողության տեր մարդիկ (Մ. Թ.)

⁵ Վ. Ի. Լենին, Յերկերի ժող., հ. XI, էջ 135

⁶ Նույնը հ. VIII, էջ 59.

այլնի առթիւ, դեպի յերկնք մղվող շարժման այս գնահատութեան առ-
թիւ: Իսկ Մարքսը չի տողորմել ճերմակ խարակածկներէ (պիսկար) գե-
րեմատութեամբ, վորոնք վախենում են հեղափոխական պայքարի գերա-
զույն ձեւերի տեսնելու քննարկելուց»¹:

Նույն Պլեխանովի մասին 1907 թվին, Լենինը գրում էր «Պրոլետա-
րիյում», «Այո, ամոթ է խոստովանել, այո, մեղք է թաքցնել, վոր
Պլեխանովն իր մենչեիկներին հասցրեց այն տեղը, վոր նրանք ծայր աւ-
տիճան խայտառակեցին սոցիալ-դեմոկրատիային: Իբրև իսկական պատ-
յանի միջի մարդ, նա պնդում էր «բուրժուազիային աջակցելու» մասին
բերան արած խոսքերը և իր անդադրում քարոզներով՝ աղբակայեց պրո-
լետարիատի՝ հեղափոխութեան ժամանակ մղած պայքարի և հակահեղափո-
խութեան դեմ մղած պայքարի ուրույն խնդիրները և ուրույն պայման-
ների ամեն մի ըմբռնում»²:

Զեխովյան պատկերները ոգտագործման նշանավոր փաստը մենք գըտ-
նում ենք «Բոդկոտի դեմ» հոդվածում, վորի մեջ, գնահատելով մենչեիկ-
ները տակտիկան 1905 թվի հեղափոխութեան ընթացքում, Լենինը հա-
մեմատում է մենչեիկներին, այդ «անհուսալի ֆիլիստեիներին և իսպառ-
բխաբոտ պեղանախներին» չեխովյան «հերոսներ»՝ Իպպոլիտ Իպպոլիտո-
վիչի («Գրականութեան ուսուցիչը» պատմվածքում) և Բելիկովի հետ
(«Պատյանի միջի մարդը» պատմվածքում):

«Մենչեիկյան ամբողջ, մանավանդ 1905 թվի (մինչև հոկտեմբերը)
գրականութեան միջով կարմիր թելի նման անցնում է մեղադրանքը բու-
շեիկներին հասցնելին «ուղղագծութեան» մեջ, խրատը նրանց հասցնելին
այն մասին, վոր պետք է հաշիւ առնել զիգագաձեւ այն ուղին, վորով
ընթանում է պատմութիւնը: Մենչեիկյան գրականութեան այս գիծը
նույնպէս նմուշ է այն դատողութեան, թե ձիերը վարսակ են ուտում և
թե Վոլգայի գաւազից ծոցն և թափվում — դատողութեան, վորն անվիճելին
ծամծմելով մթնեցնում է եյուրթյունն այն բանի, վոր վիճելի չէ: Վոր
պատմութիւնը սովորաբար ընթանում է զիգագաձեւ ուղիով, և վոր
մարքսիստը պետք է իմանա հաշիւ առնել պատմութեան ամենակնճոտ
և քմահաճ զիգագաձեւերը, — գտ անվիճելի չէ: Սակայն այս անվիճելի
ծամվածքը բոլորովին չի վերաբերում այն հարցին, թե ինչ պետք է անի
մարքսիստը, յերբ նույն պատմութիւնը պայքարող ուժերի առաջ դնում

է ուղիղ կամ զիգագաձեւ ուղին ընտրելու հարցը: Այդպիսի մոմենտնե-
րին կամ այդպիսի շրջաններին, յերբ այդ պատահում է, պատմութեան
սովորական զիգագաձեւութեան մասին դատողութիւնն անելով թեթե-
ւոր են՝ իսկպաես վոր նշանակում է պատյանի միջի մարդ դառնալ և խո-
բանալ այն ճշմարտութեան գնութեամբ, թե ձիերը վարսակ են ուտում»³:

Մեծագույն հեղափոխական կրքոտութեամբ նշակակելով դավաճան
Կառեցկու Հոկտեմբերյան հեղափոխութեան դեմ արած հարձակումները,
Լենինը գրում է, վոր «հենցապա» Կառեցկին համառորեն, պատյանի միջի
մարդու համառութեամբ, անդադար միեւնոյնն է պնդում, «տուր ինձ
խաղաղ դեմոկրատիա, առանց քաղաքացիական կռիւի, առանց դիկտա-
տուրայի, լավ վիճակագրութեամբ»³...

Բուրժուազիայի ըթմալտ լակեյների՝ մենչեիկները և հսերները հա-
րամալ հարձակումներին ի պատասխան, Լենինն ասում է. «Հնարավոր
է արդոյդ բաղմամյա պատերազմն առանց զորքի ու ժողովրդական մաս-
տաների վայր ենաց մասն: Իհարկէ, վոչ: Բաղմամյա պատերազմի այս-
պիսի հետեանքն այնպայմանորեն անխուսափելի չէ մի քանի տարով,
յեթէ վոչ մինչև մի սերունդ անցնելը: Իսկ մեր «պատյանի միջի մար-
դիկ», բուրժուական ինտելիգենցիայից գուրս յեկած այդ «լալկաները»,
վորոնք իրենց «սոցիալ-դեմոկրատ» և «սոցիալիստ» են անվանում, ձայ-
նակցում են բուրժուազիային, հեղափոխութեան վղին փաթաթելով վայ-
րենացման արտահայտումները կամ վայրենացման ծայրահեղ դեպքերի
դեմ մղվող պայքարի անխուսափելի խտութիւնը, — թեեւ պարզ է ինչ-
պես լուրջը, վոր այդ վայրենացումն ստեղծված է իմպերիալիստական
պատերազմի հետեանքով»⁴:

Լենինը բաղմաթիւ անգամներ ոգտվում է չեխովյան անմահ տիպե-
բով՝ աջ և «ձախ» թեքումներ ունեցողները դեմ պայքար մղելու: «Պատ-
յանի միջի մարդուն» հիշում է նա Բուխարինի սխալները քննելիս.

«... սնուղղելի սխալ կլինել հայտարարել, թե քանի վոր ընդունված
է մեր տնտեսական «ուժերի» և քաղաքական ուժերի անհամապատաս-
խանութիւնը, ապա «ուրեմն» հարկավոր չէր վերցնել իշխանութիւնը:
Այդպէս են դատում «պատյանի միջի մարդիկ», վորոնք մոռանում են,

1 Վ. Ի. Լենին, Յերկերի ժողով, հ. XII, էջ 21.

2 Ռենցատ — գովանանքը, համոզմունքն ուրացող (Ռ. Մ.).

3 Վ. Ի. Լենին, Յերկերի ժողով, հ. XXIII, էջ 404.

4 Նույնը հ. XXIII, էջ 107.

1 Վ. Ի. Լենին, Յերկերի ժողով, հատ. X, էջ 365 — 366.

2 Նույնը, հ. XII, էջ 114 — 115.

վոր համապատասխանություն չի լինի յերբեք, վոր այն չի կարող լինել բնության զարգացման մեջ, ինչպես և հասարակության զարգացման մեջ»...¹

Վերջապես, պատասխանելով մենշևիկ Ն. Ն. Սուխանովին, Լենինը, թորհուրդներն Յեբրորդ համառուսական համագումարում ժողովութորնի գեկուցման առթիվ արտասանած իր յեղրափակման խոսքում, ասում է.

«Այսոր լսելով աջակողմի հետորներին, վորոնք հանդես եյին գալիս իրենց առարկություններով իմ գեկուցման առթիվ, յես զարմանում եմ, թե ինչպես նրանք մինչև այժմ վոչինչ չեն սովորել և մոռացել են այն ամենը, վոր նրանք զուր տեղը «մարքսիզմ» են անվանում... վորոքմեյն պատյանի միջի մարդիկ, վորոնք ամբողջ ժամանակ հեռու եյին կանգնել կյանքից, քնած էյին և քնելով, բարձի տակ խնամքով պահում էյին հին, գզգզված, վոչ վորք պետք չեկող այն գրքույկը, վոր նրանց համար հանդիսանում է ուղեցույց և դասագիրք՝ պաշտոնական սոցիալիզմը պատվաստելու գործում»²:

Ձեխովյան պատկերը բացառիկ ուժով ոգտագործվել է նաև պրոլետարական հեղափոխության առաջնորդ Ի. Վ. Ստալինի կողմից կուսակցության գլխավոր գծի համար մովոյ պայքարում: Վերցնելով գավառացի ուսուցիչ Բելիկովի գզվելի պատկերը, Ստալինը նրան արդիականացրեք, փոխադրել է խորհրդային իրականության պայմանները, յերևան հանելով բելիկովյան գծերը կուսակցության մեջ, աջ թեքման դեկավարներին մոտ: Ընկ. Ստալինը կարող ձեռքով վերիմաստավորել է Ձեխովի ալած պատկերը. նորությունների հանդես պածած այն անհաղթելի յերկյուղին, վորը չեխովյան պերսոնաժի³ մոտ յերևան եր գալիս առաջեկապես կենցաղային հողի վրա, տրված է սուր քաղաքական, խորը դասակարգային իմաստ:

Զախլախելով աջ ոպողիցիայի լիդերներին⁴, ընկ. Ստալինը, XVI կուսահամագումարում, Կի-ի քաղաքական հաշվետվության մասին իր յեղրափակման խոսքում աջերի քաղաքական բնութագիրն համալրեց՝ հետևյալ համեմատությունն անելով չեխովյան դասական (կլասիկ) պատկերին հետ.

«... նախկին լիդերները չեն հասկանում մեր բոլշևիկյան տեմպերը,

չեն հավատում տեմպերին և, առհասարակ, չեն բնորոշում վոչ մի այդպիսի բան, ինչ-վոր դուրս է գալիս առիտհանական զարգացման շրջանակներից, ինքնահոսի շրջանակներից: Դեռ ավելին, մեր բոլշևիկյան տեմպերը, մեր զարգացման նոր ուղիները, վորոնք կապված են վերակառուցման ժամանակաշրջանի հետ, դասակարգային պայքարի սրումը և այդ սրման հետևանքները նրանց տագնապ, շփոթվածություն, յերկյուղ, վախ են ներշնչում: Ուստի հասկանալի յես, վոր նրանք խույս են տալիս այն ամենից, ինչ-վոր կապված է մեր կուսակցության ամենից ավելի սուր լուրսնգների հետ: Նրանք հիվանդ են նույն այն հիվանդությամբ, ինչով հիվանդ եր չեխովյան հայտնի հերոս Բելիկովը, հուսարեն լեզվի ուսուցիչը, պատյանի միջի մարդը: Հիշում եք Ձեխովի «Պատյանի միջի մարդը» պատմվածքը: Այդ հերոսն, ինչպես հայտնի յես, միշտ մեն եր գալիս կրկնակոշիկներով, միշտ բամբակի հաստ վերարկուով հովանոցով՝ թե շոգ և թե ցուրտ յեղանակին: «Ներեցեք, ձեք ինչին են պետք կրկնակոշիկներն ու բամբակե հաստ վերարկուն հուլիս ամսին, մի այսպիսի շոգ յեղանակին»,— հարցնում էյին Բելիկովին: «Համենայն դեպս,— պատասխանում եր Բելիկովը, — վայ թե մի բան պատահի, իսկ յեթե հանկարծ սառնամանիքը խփի, ապա այն ժամանակ ինչ անեմ (Ընդհանուր ծիծաղ, ծափահարաւքյուցներ): Նա, ասես՝ ժանտախտից, վախենում եր ամեն մի նոր բանից, այն ամենից, ինչ վոր դուրս եր գալիս քաղեկական գործ կյանքի սովորական շրջանից, նոր ձաշարան բաց արին. Բելիկովը արդեն տագնապի մեջ է. «այդ, իհարկե, գուցե և լավ է ձաշարան ունենալը, բայց տեսեք, չլինի թե մի բան պատահի»: Դրամատիկան խմբակ կազմակերպեցին, ընթերցարան բաց արին, — Բելիկովը նորից տագնապի մեջ է. «գրամատիկական խմբակ, նոր ընթերցարան,— տեսե՛ս, ինչի՞ համար է սա. տեսեք, չլինի թե մի բան պատահի» (Ընդհանուր ծիծաղ):

Այդ նույն բանը պետք է ասել աջ ոպողիցիայի նախկին լիդերներին մասին: Հիշում եք ԲՏՈՒՀ-երը (ԲՏՅ) տնտեսական ժողովմասներին հանձնելու պատմությունը: ԼՏԳՈ-ին մենք ուղում էյինք հանձնել ընդամենը յերկու ԲՏՈՒՀ: Թվում եր, թե մի փոքրիկ գործ է: Այնինչ՝ մենք կատարի գլխադրության հանդիպեցինք աջ ուկրոնիստներին կողմից: «Յեկու ԲՏՈՒՀ հանձնել ԺՏԳՈ-ին՝ Ինչի՞ համար է դա: Արդյոք ավելի լավ չե՞ սպասել Տեսեք, այս ձեռնարկումից մի բան դուրս չգան: Իսկ այժմ մեզանում բոլոր ԲՏՈՒՀ-երը հանձնված են տնտեսական ժողովմասներին: Յե՛վ վոչինչ — ապրում ենք, Կոմ, որինակ, կուլակներին դեմ ար-

¹ Վ. Ի. Լենին, Յերկ. Ժողով, հ. XXII, էջ 521—522.

² Նույնը, հ. XXII, էջ 219.

³ Պերսոնաժ — գործող անձեր (Մ. Թ.).

⁴ Լիդեր — քաղաքական կուսակցության պարագլուխ (Մ. Թ.).

տակարգ միջոցներ ձեռք առնելու հարցը: Հիշում եք, թե այս առթիվ ի՞նչ հիստորիկա սարքեցին աջ ուղղիցիայի լիդերները: Արտակարգ միջոցառումներ կուլակները՝ դեմ: Ինչի՞ համար ե դա: Արդյոք ավելի լավ չի՞ լինի լիբերալ քաղաքականություն կիրառել կուլակների վերաբերմամբ: Տեսեք, այս ձեռնարկումից չլինի՝ թե մի բան դուրս գա՞: Իսկ այժմ մենք կիրառում ենք կուլակությունը վորպես դասակարգ վերացնելու քաղաքականություն, մի քաղաքականություն, վորի համեմատությամբ կուլակությունը, մե գործադրած արտակարգ միջոցառումները դասարկ բան են: Յե՛ղ վոչինչ—ապրում ենք: Կամ, որինտեղ, կոլտնտեսությունները ու խորհրդատեսությունների հարցը: «Խորհրդատեսություններ ու կոլտնտեսություններ: Ինչի՞ համար են նրանք: Մենք չտապելու լինչ կարելու ունենք: Տեսեք, այդ խորհրդատեսություններից և կոլտնտեսություններից չլինի՞ թե մի բան դուրս գա՞: Յե՛ղ այլև և այլն:

Ահա այս վախը նորից, նոր հարցերին նոր կերպ մոտենալու անկարողությունը «չլինի թե մի բան պատահի»-ի այս տագնապը, պատյանի միջի մարդու հենց այս գծերն են, վոր աջ ուղղիցիայի նախկին լիդերներից լաճաքարում են կուլակցություն հետ ինչպես հարկին և ձուլվելու:

Պատյանի միջի մարդու այս գծերը նրանց մեջ առանձնապես ծիծաղելի ձևեր են ընդունում դժվարություններ յերևան գալիս, հորիզոնի վրա մի ամենափոքրիկ թխվիկ յերևան գալիս: Մեղանում վորեւե տեղ դժվարություն, արգելք յերևան յեկավ թե չէ, նրանք արդեն տագնապի մեջ են՝ չլինի թե մի բան պատահի: Մի վորեւե տեղ շխտացրեց տարականը (բլոշը)՝ չկարողանալով դեռ ինչպես հարկին և դուրս գալ իր բնից, իսկ նրանք արգեն հետ են նետվում, սարսափահար են լինում և սկսում վայնասուն բարձրացնել կատասարոֆայի, խորհրդային իշխանության կործանման մասին (Ընդհանուր քրքիջ): Մենք հանդուրժողական ենք նրանց և աշխատում ենք համոզել, թե այստեղ դեռ մի վտանգավոր բան չկա, թե ուս ընդամենը մի տարակալ ե, վորից վախեց ե վախենալ: Բայց ուս եք առում: Նրանք շարունակում են իրենց վայնասունը: «Ինչպե՞ս թե տարակալ: Դա վոչ թե մի տարակալ ե, այլ մի հաղարթակ կատարի գաղափար: Դա տարակալ չի, այլ անդունդ ե, խորհրդային, իշխանություն կործանում: Յե՛ղ սկսվում ե ասեկոսներ շարանը... Բուխարինն այս առթիվ թեղիսներ ե գրում և դրանք ուղարկում ե ԿԿ՝ պնդելով, թե ԿԿ-ի քաղաքականությունը յերկիրը կործանման հասցրեց, թե խորհրդային իշխանությունը հաստատապես կկործանվի յեթե վոչ այժմ, գոնե մի ամսից հետո: Ռիկովը միանում ե Բուխարինի թեղիսներին, սակայն

այն վերապահություններ, թե Բուխարինի հետ ինքն ունի ամենալուրջ տարաձայնություն, վորը կայանում ե նրանում, թե խորհրդային իշխանությունը, նրա կարծիքով, կկործանվի վոչ թե մի ամսից հետո, այլ մի ամիս ու յերկուսից հետո (Ընդհ. ծիծաղ): Տոմսկին միանում ե Ռիկովին և Բուխարինին, բայց բողոքում ե այն բանի դեմ, վոր չկարողացան յուրա գնալ առանց փաստաթղթի, վորի համար հետո հարկ կլինի պատասխան տալ: «Բանի՞ անգամ եմ ձեզ ասել, — ինչ ուղում եք արեք, բայց փաստաթուղթ մի թողնեք, հեռքեր մի թողնեք: (Համերայն քրքիջ ամբողջ՝ դաշիվեմ: Յերկարտոխ ծափահարություններ): Չձմարլա ե, հետո մի տարի անց, յերբ ամեն մի հիմարի համար պարզ ե դառնում, վոր տարակալի վտանգը մի հոտած ձու ել չարժե, ուկրոնխաներն սկսում են ուշքի գալ և, սերտ առնելով, դեմ չեն նույնիսկ պարծենկոտության դիմելու, հայտարարելով, թե նրանք վոչ մի տարակալից չեն վախենում՝ մանավանդ վոր այդ տարակալն ել նիհար ու ստույգ մեկն ե (Ծիծաղ: Ծափահարություններ): Բայց ուս լինում ե մի առարկ հետո Իսկ առայժմ հաճեցեք տոտապել այս կանխտելիներ յերեսից...

Ահա, ընկերներ, այն հանգամանքները վորոնք աջ ուղղիցիայի նախկին լիդերներին խանգարում են ավելի մոտենալու կուլակցական դեկավարություն կորեկին և մինչև վերջը ձուլվելու նրա հետ:

«Վոչվոր այնքան պարզ և նրբություններ չեն հասկանում կյանքի մանրուքները տրագիկոս, ինչպես Անտոն Չեխովը, — ասում ե Մ. Գորկին — Վոչվոր նրանցից առաջ չի կարողացել այնպես անխնայ, ճշմարիտ կերպով նկարել մարդկանց առջև նրանց կյանքի անարդ և թախծալի պատկերը՝ քաղցեհիսկան տափակ կյանքի աղոտ քառոտ:

Ստորությունը նրա թշնամին եր. նա ամբողջ կյանքում պայքարեց նրա դեմ. նրան եր ծղոլում նա, նրան եր նկարագրում նա իր անվախ, սուր գրչով, կարողանալով ստորության բոլորսը գտնել նույնիսկ այնտեղ, ուր, առաջին հայացքից, կարծես ամեն ինչ շատ լավ, հարմար ե սարքված ու մինչև անգամ — փայլ ունի... Յե՛ղ դրա համար ստորությունը վրեժն առավ նրանից մի զազրելի վարմունքով, նրա դեկավ — պոետի դեկավ — վտարեններ փոխադրող վագոնի մեջ տեղավորելով²:

Հասկանալի յե սոցիալիստական աշխարհ կառուցողների սերը դեպի ադպիսի գրողը: Ա. Գ. Չեխովի ծննդյան 75-ամյակը, վոր լրացավ այս

¹ Ի. Վ. Ստալին, Լենինի դիմ հարցերը, 9-րդ հրատ. էջ 575—576.

² Մ. Գորկի, Յերկերի ժողով, հ. XXII, էջ 41.

տարի, խորհրդանշելի յերկրում փոխվեց մի իսկապես ժողովրդական տոնի։ Գործարաններն ու կոլտոհները վեր հանեցին հոբելյանը՝ զբողի յերկասիրությունները բարձրաձայն ընթերցումով, գեղարվեստական ցուցահանդեսներով, զբաղան յերեկոյթներով կուլտուրայի և հանգստի պարկերում։ Մանավանդ սրտանց տոնվեցին չեխովյան որերը՝ Տադանրոզում, զբողի մայրենի քաղաքում Նոր սոցիալիստական Տադանրոզը՝ ծաղիկներով զիմափորեց տոնակատարությանը ներկա լինելու համար յեկող կուսակցության Յերկրկոմի քարտուղարներ՝ ընկ. ընկ. Բ. Պ. Շերոլայանին, Մ. Մ. Մալինովին, հանրապետության ժողովրդական արտիստներին՝ Ո. Լ. Կնիպալեր—Չեխովային (զբողի կնոջը), Ի. Մ. Մոսկովինին, գեղարվեստի վաստակավոր գործիչ Ս. Լ. Վիշնևովսկուն, վաստակավոր գեղասան Սմելյովին, Տարասովային, Յերշովին, Վերբեցկուն, Տելեշովային, Որլովին, Լեվ Նիկոլին, Վալենտինա Կատայեվա զբողներին...

Մարդիկ, վորոնք կառուցում են հրաշալի մի կյանք, գիտեն գնահատել մեծ զբողին, կայտառակ անցյալն առհավետ նշավակողին¹։

¹ Ընթերցողին հանձնարարում ենք ծանոթանալ Համ. Կ (ը) Կ-ի Տադանրոզի քաղկոմի քարտուղար Ստ. Վարդանյանի Չեխովյան հանդեսներին Տադանրոզում արտասանած նշանավոր ճառի հետ՝ «Չեխովի հետ»-ընդգիծ «չեխովյանի» (հրատարակված և մեր հրատարակչության կողմից 1935 թ. հունիսին, գիրք 25 կողմ)։

28736-60

Ա. Պ. ԶԵԽՈՎ

ՊԱՏՅԱՆԻ ՄԻՋԻ ՄԱՐԴԸ



Մի րոնոսից կ'զյուզի ամենածայրում, տանուտեր Պրոկո-
ֆիյի ժարագում գիշերելու տեղավորվեցին ուշացած վո-
սորդները: Նրանք միայն յերկու հոգի էյին—անասնաբույժ
Իվան Իվանիչն ու գիմնադիայի ուսուցիչ Բուրկինը: Իվան
Իվանիչն ուներ մի բավական տարօրինակ, կրկնակի ազդա-
նուն—Ձիմշա—Հիմալայսկիյ, վորը բոլորովին չէր սազում
նրան ու նրան ամբողջ նահանգում անվանում էյին անուն
հայրանունը տալով: Նա ապրում էր քաղաքին մոտիկ, ձիա-
բուծարանում, և այժմ յեկել էր վորսի, վորպեսզի մաքուր
ող ծծի: Իսկ գիմնադիայի ուսուցիչ Բուրկինը ամեն ամառ
հյուր էր լինում Կոմս Պ-երի մոտ և այդ վայրերում վա-
ղուց արդեն ճանաչված ժարդ էր:

Ձեյին քնում: Իվան Իվանիչը, վոր բարձրահասակ նի-
հար մի ծերուկ էր յերկար բեխերով, նստել էր դուրսը,
մուտքի մոտ և չիբուխ էր ծխում: Նրան լուսավորում էր
լուսինը: Բուրկինը պառկել էր ներսը, խոտի վրա և աղջա-
մուղջի մեջ չէր նկատվում:

Ջանազան պատմություններ էյին անում: Իմիջի այլոց
խոսեցին այն մասին, վոր տանուտիրոջ կինը, Մավրան,
առողջ ու վոչ հիմար մի կին, իր ամբողջ կյանքում հայրենի
գյուղից դուրս չի յեկել, յերբեք չի տեսել վոչ քաղաք, վոչ

յերկաթուղի, իսկ վերջին տասը տարին շարունակ նստած ե վառարանի մոտ ու միայն յերեկոներն ե դուրս գալիս փողոց:

— Բայց ի՞նչ զարմանալու բան կա այստեղ, — ասաց Բուրկինը:— Մենակություն սիրող բնավորությամբ այնպիսի մարդիկ կան, վորոնք խեղճեմուն—անապատականի կամ խր-խուռնջի նման աշխատում են մտնել իրենց կեղևի մեջ. դրանց թիվը քիչ չէ այս աշխարհում: Գուցե այստեղ գոյություն ունի ատավիզմը¹, այսինքն վերադարձը դեպի այն ժամա-նակները, յերբ մարդու նախորդը դեռ հասարակական կեն-դանի չէր և մենակ եր ապրում իր վորջում, կամ գուցե դա մարդկային բնավորության բազմապիսություններից մեկն ե,— Դժ գիտե: Յես բնագետ չեմ և իմ գործս չէ այսպիսի հարցեր շոշափել. յես միայն ուզում եմ ասել, վոր այնպիսի մարդիկ, ինչպիսին Մավրան ե, հազվադեպ յերևույթներին չեն: Հենց ահա, հեռուները չփնտռենք, մոտ յերկու ամիս առաջ մեզ մոտ, քաղաքում, մեռավ վոմի Բելիկով, հունա-բեն լեզվի ուսուցիչ, իմ բնկերը: Դուք, հարկավ, նրա մասին լսած կլինեք: Նա նշանավոր եր նրանով, վոր միշտ, նույն-իսկ շատ լավ յեղանակներին, դուրս եր գալիս կրկնակոշիկ-ներով ու հովանոցով և անպայման բամբակի հաստ վերաբ-կուն հագին: Նրա և՛ հովանոցը պատյանի մեջ եր, և՛ ժամա-ցույցը մոխրագույն կաշվե պատյանի մեջ եր, ու յերբ նա հանում եր իր գրչահատը, վորպեսզի մատիտի ծայրը սրի, այդ գրչահատն ել պատյանի մեջ եր. թվում եր, թե նրա դեմքն ել պատյանի մեջ ե, վորովհետե նա շարունակ իր դեմքը թազցնում եր վեր բարձրացրած ոձիքի մեջ: Նա կրում եր մութ ակնոցներ, հագնում եր ֆուֆայկա, ականջները

¹ Ատավիզմ — հեռավոր նախորդների հատկանիշների յերևան գալը հաջորդ սերունդների վրա.

բամբակ եր խցկում և, յերբ նա կառք եր նստում, հրամա-յում եր կառքի ծածկը բարձրացնել: Մի խոսքով, այդ մար-դու մեջ նկատվում եր մշտական և անպարտելի ձգտում՝ շրջապատել իրեն կեղևով, ստեղծել իր համար, այսպես ասած պատյան, վորն առանձնացներ նրան, պաշտպաներ արտա-քին ազդեցություններից: Իրականությունը դրգուում եր նրան, վախեցնում, պահում եր մշտական տագնապի մեջ և գուցե, իր այդ յերկշտությունը, իր հակակրանքը դեպի իրականությունն արդարացնելու համար նա միշտ գտվում եր անցյալը և այն, ինչվոր յերբեք չէր յեղել. և հին լի-զոնները, վոր նա դասափանդում եր, ըստ եյության նրա համար նույն կրկնակոշիկներն եյին ու հովանոցը, ուր նա թազնվում եր իրական կյանքից:

— Ո՛ր, ի՞նչ հնչուն, ի՞նչ գեղեցիկ ե հունարեն լեզուն, — ասում եր նա քաղցր արտահայտությամբ. և իբր ապացույց իր խոսքերին, աչքերը կկոցելով ու մատը բարձրացնելով նա արտասանում եր՝— Անթրոպոս¹:

Բելիկովն աշխատում եր իր միտքն ել թաքցնել պատ-յանի մեջ: Նրա համար պարզ եյին միայն այն շրջաբերա-կաններն ու լրագրային հոգվածները, վորոնց մեջ արգել-վում եր վորեւե մի բան: Յերբ շրջաբերականի մեջ աշա-կերտներին արգելվում եր յերեկոյան ժամի իննից հետո փո-ղոց դուրս գալ, կամ վորեւե հողվածում արգելվում եր մարմ նական սերը, ապա այդ նրա համար պարզ եր ու վորոշ: Արգելված ե— պրծավ գնաց: Իսկ թույլտվության և թույ-լատրման մեջ, նրա կարծիքով, միշտ կար մի կասկածելի տարր, ինչ վոր լրիվ չարտահայտված, անորոշ բան: Յերբ քաղաքում թույլատրվում եր դրամատիկական խմբակ, կամ

¹ Անթրոպոս — հունարեն՝ «մարդ».

ընթերցարան, կամ թեյատուն, ապա նա գլուխն եր որո-
ւում և կամացուկ ասում:

— Դե, իհարկե, այդ այդպես ե, այդ բոլորը շատ գեղե-
ցիկ ե, բայց չլինի՝ տակից ուրիշ բան դուրս գա:

Ամեն տեսակ խախտում, շեղում, խոտորում կանոններից
վհատութեան մեջ եր գցում նրան, թեև, ըստ յերևույթին,
այդ իսկի նրա գործը չեր: Յեթե ընկերներից մեկն ուշա-
նում եր մաղթանքին, կամ յեթե լուրեր եյին հասնում գիմ-
նադիստների վորեւեւ չարածձիւթյան մասին, կամ դասա-
րանական դաստիարակուհուն ուշ գիշերով տեսնում եյին մի
սպայի հետ, այդ դեպքում նա շատ եր վրդովվում և շարու-
նակ ասում եր, չլինի՝ տակից ուրիշ բան դուրս գա: Իսկ
մանկավարժական խորհրդակցութիւններում նա ուղղակի
տանջում եր մեզ իր գգուշավորութեամբ, կասկածոտութեամբ
և իր գուտ պատշաճային նկատառումներով այն մասին, վոր
իբր անա արական և իգական գիմնադիւսներում յերիտասար-
դութիւնն իրեն վատ ե պահում, շատ ե աղմկում դասա-
րաններում — ախ, ինչպես լիներ, վոր վարչութեան ականջը
չընկներ. ախ, չլինի՝ տակից ուրիշ բան դուրս գա, — և վոր,
յեթե յերկրորդ դասարանից դուրս արվի Պետրովը, իսկ չոր-
րորից Յեգորովը, ապա այդ շատ լավ կլիներ: Յեւ ինչ:
Իր հառաչանքներով, վայնասունով, իր մութ ակնոցներով՝
գունատ, փոքրիկ դեմքի վրա, — գիտե՞ք, ժանտաքիսի նման
փոքրիկ դեմքի վրա, — նա ճնշում եր մեզ բոլորիս, և մենք
գիշում եյինք նրան, իջեցնում եյինք Պետրովի ու Յեգորովի
վարքի թվանշանները, նրանց փակում եյինք առանձնակի
ու վերջապես հեռացրինք և՛ Պետրովին և՛ Յեգորովին: Նա
մի տարրինակ սովորութիւն ուներ, այսինքն շրջել մեր
ընակարանները: Դալիս ե մի ուսուցչի մօտ, նստում ե ու
լսում և, կարծես, ինչ-վոր զննում ե: Մի յերկու ժամ այս-

պես նստում ե և ապա հեռանում: Դա, նրա կարծիքով, ըն-
կերների հետ լավ հարաբերութիւն պահպանել եր նշանա-
կում և, ըստ յերևույթին, այցելել մեզ ու նստել, ծանր եր
նրա համար ու նա մեզ մօտ գալիս եր միայն այն բանի
համար, վոր դա համարում եր իր ընկերական պարտակա-
նութիւնը: Մենք ուսուցիչներս, վախենում եյինք նրանից:
Յեւ նույնիսկ դիրեկտորն ել եր վախենում նրանից: Չար-
մանալի յեն մեր ուսուցիչները. ախր բոլորն ել խոհուն մար-
դիկ են, վերին աստիճանի կարգին. նրանք դաստիարակված
են Տուրգենևի ու Շչեդրինի գրվածքներով, այնուամենայ-
նիվ այդ մարդը, վոր միշտ շրջում եր կրկնակողմնակներով ու
հովանոցով, ամբողջ 15 տարի ամբողջ գիմնադիւսն իր ձեռ-
քում եր պահում: Ի՞նչ գիմնադիւս: Ամբողջ քաղաքը: Մեր
կանայք շարաթ որերն ընտանեկան ներկայացումներ չեյին
սարքում, վախենում եյին, վոր նա կիմանա. հոգեվորակա-
նութիւնն ել քաշվում եր նրա ներկայութեամբ պասը ուտել
կամ քարտ խաղար: Բելիկովի նման մարդկանց ազդեցու-
թեան տակ վերջին տաս-տասնինգ տարվա ընթացքում մեր
քաղաքում մարդիկ սկսեցին ամեն ինչից վախենալ: Վախե-
նում եյին բարձր խոսել, նամակ ուղարկել, ծանոթանալ,
գիրք կարդալ, վախենում եյին աղքատներին ոգնել, գրա-
դիտութիւն սովորեցնել...

Իվան Իվանիչը կամենալով ինչ-վոր բան ասել, հազաց,
բայց նախ վառեց չիբուխը, նայեց լուսին և հետո արդեն
ասաց ընդհատ-ընդհատ:

— Այո. խոհուն, կարգին մարդիկ են. կարդում են և
Շչեդրինին և Տուրգենևին, զանազան Բոկլերին՝ և ուրիշ-

¹ Բոկլ չէրի Թոմաս (1821 - 1862) — անգլիացի պատմագետ և սոցիո-
լոգ, «Քաղաքակրթութեան պատմութիւնն Անգլիայում» գրվածքի հեղի-
նակը:

ներին, բայց յենթարկվեցին, չէ՞, համբերեցին... բանն եմ հենց այդ եւ:

Բեիլիոյն ապրում եր նույն տանը, վորտեղ և յես,—շաւրունակեց Բուրկինը,—նույն հարկում, դուռը դուռն դեմ. մենք հաճախ հանդիպում եյինք, և յես գիտեցի նրա տնային կյանքը: Տանն ել նույն բանն եր. խալաթ, գիշերվա թասակ, փեղկեր, սոզնակներ, մի ամբողջ շարք արգելումներ, սահմանափակումներ և—ախ, չլինի տակից ուրիշ բան դուրս գաւ. Պասուց ուտելիքը ֆուսսակար եւ, իսկ ուտիսուցը չի կարելի վորովհետեւ մեկ ել տեսար՝ կասեն, թե Բեիլիոյն պասերը չի պահում. և նա ուտում եր սուգակ (սուլա ձուկ) կարագով, — դա պասուց ուտելիք չեր, բայց նաև չեր կարելի ասել, թե ուտիսուց եր¹: Կին ծառայող նա չեր պահում, սարսափելով, վոր իր մասին կարող են վատ բաներ մտածել, այլ պահում եր խոհարար Աֆանասիյին, — վաթսուն տարեկան, հարբեցող և կիսախեղագար ծերունուն, վորը յեղել եր զինվորականի սպասավոր (գենչիկ) և քիչ-շատ ճաշ յեփել գիտեր: Այդ Աֆանասին սովորաբար կանգնում եր դուռն մոտ, ձեռքերը կրծքին խաչած ու խոր հառաչանքով միշտ միևնույնն եր մըթմըթում.

— Հիմի նրանք եւքան են շատացել:

Բեիլիոյի ննջարանը փոքր եր, ասես՝ մի արկղ լիներ. մահճակալն առագաստ ուներ: Քնելիս նա գլխով եր մտնում վերմակի տակ. շոգ եր, հեղձուցիչ, քամին փչում եր փակ դռներին, վառարանն աղմկում եր, խոհանոցից հառաչանքներ եյին լսվում, չարագուշակ հառաչանքներ...

Յեվ նա սարսափում եր վերմակի տակ: Նա վախենում եր, վոր չլինի՝ տակից ուրիշ բան դուրս գա, չլինի՝ Աֆա-

¹ Ձկնեղներ ուսաց զավանությամբ պասերին թույլատրելի յե ուտել (Մ. Թ.).

նասին իրեն մորթի, գողերը հանկարծ ներս մտնեն. և հետո ամբողջ գիշերը սարսափելի յերազներ եր տեսնում, իսկ առավոտյան, յերբ մենք միասին գիմնադիւս եյինք գնում, նա տխուր եր լինում, գունատ, ու յերևում եր, վոր այն բազմամարդ գիմնադիւսն, ուր նա գնում եր, սարսափելի յեր նրա համար, հակադրելի յեր նրա վողջ ելությունը, և նրա պես մեռածներ բնավորություն ունեցող մարդու համար ծանր եր ինձ հետ կողք կողքի գնալը:

— Արդեն շատ աղմկալի յեն դարձել մեր դասարաններն, — ասում եր նա, կարծես աշխատելով բացատրություն գտնել իր ծանր տրամադրության: — Վոչ մի բանի նման չի:

Յեվ հունարեն լեզվի այդ ուսուցիչը, պատշանի մեջ ապրող այդ մարդը, կարող եք յերևակայել, քիչ մնաց ամուսնանալ: Իվան Իվանիչն արագ նայեց դեպի մարագն ու ասաց.

— Կատակ եք անում:

— Այո, քիչ մնաց ամուսնանալ, վորքան ել դա տարրերինակ թվի: Մեզ մոտ պատմության և աշխարհագրության նոր ուսուցիչ նշանակեցին, վոմն Կովալենկո Միխայիլ Սավիչ, խախտնեցի¹ եր: Նա մենակ չեկավ, նրա հետ եր նաև քույրը, Վառենկան: Նոր ուսուցիչը ջանք մարդ եր, բարձրահասակ, թխադեմ, ահագին ձեռքերով, և զեմքից յերևում եր, վոր խոսում ե բամբ ձայնով (բաս), ու իսկապես, ձայնը վոնց-վոր տակառից դուրս գար՝ բու-բու-բու...: Իսկ քույրն արդեն վոչ ջահել, 30 տարեկանի մոտ, բայց նույնպես բարձրահասակ, վայելչակազմ, սև հոնքերով, կարմիր թշերով, — մի խստքով՝ որիորդ չեր, այլ մարմեղադ, և այնպես ժիր, աղմկոտ, շարունակ յերգում եր ժալորոսիական² ու մանաներ ու քրքշում եր: Չնչին պատճառով սկսում եր նա իր հնչուն ծի-

¹ Ուկրաինացիների մականունը (Մ. Թ.).

² Մալորոսիական — ուկրաինական (Մ. Թ.).

ծաղը՝ հա՛հա՛հա՛: Մեր առաջին հիմնավոր ծանոթութիւնը կովալենկոնների հետ, հիշում եմ, տեղի ունեցավ դիրեկտորի անվանակոչութեան տոնին... Մոայլ, լարվածորեն ձանձրալի մանկավարժների միջև, վորոնք անվանակոչութեան են գալիս ըստ պարտականութեան, հանկարծ տեսնում ենք նոր Ափրոդիտե¹ ծնվեց փրփուրից. քայլում է ձեռքերը մեջքին դրած, քրքրում է, յերգում է, պարում...: Նա զգացմունքով յերգեց «Փչում են քամիները», հետո յեւ մի ուրիշ ոտմանս, ու ելի, և մեղ բոլորիս հիացրեց, բոլորիս, նույնիսկ Բելիկովին: Նա նստեց որիորդի կողքին և քաղցր ժպտալով ասաց.

— Մալորոսիական լեզուն իր քնքուշութեամբ և դուրեկան հնչունութեամբ հիշեցնում է հին հունականը:

Այդ շոյեց աղջկան, և նա սկսեց նրան պատմել զգացմունքով ու համոզիչ յեղանակով, վոր Գաղյաչսկիյ գավառում նա ագարակ ունի, իսկ ագարակում ապրում է մայրը, և այնտեղ այնպիսի տանձեր կան, այնպիսի սեխեր, այնպիսի կաբակներ: Խախոլները (ուկրայինացիները) դժուամիւ կաբակ են ասում, իսկ կաբակին (ողետուն)՝ շինկա. նրանք բորշ են յեփում կարմիր և կապույտ բադրիջանով, այնքան համեղ, այնքան համեղ, վոր ուղղակի՝ «սարսափելի՝ համեղ»:

Մենք լսում էյինք այդ, լսում, և հանկարծ բոլորիս մեջ եւ մի միտք ծագեց:

— Ի՛նչ լավ կլիներ, վոր նրանց ամուսնացնեյինք, — կամացուկ ասաց ինձ դիրեկտորի կինը:

Ամենքս եւ, չգիտեմ ինչու, հիշեցինք, վոր մեր Բելիկովը ամուսնացած չէ, և այժմ մեղ տարորինակ թվաց, վոր մինչև այժմ այդ չեյինք նկատած, աչքաթող էյինք արած նրա

¹ Ափրոդիտե — հին Հունաստանի ավանդական դիցուհիներից (աստվածուհի) մեկն է (սիրո և գեցեցկութեան), վոր ծնվել է ծովի փրփուրից.

կյանքի այդքան կարեոր մանրամասնութիւնը: Ինչպէս է վերաբերվում նա ընդհանրապես դեպի կինը, ինչպէս է լուծում նա իր կյանքի եյական հարցը: Առաջ այդ բանը մեղ բոլորովին չէր հետաքրքրում. դուցե մենք մտածել անգամ չեյինք կարող, վոր մի մարդ, վորն ամեն տեսակ յեղանակներին ման է գալիս կրկնակողիկներով ու քնում է առաջաստի տակ, կարող է սիրել:

— Նա վաղուց արդեն քառասունն անցել է, իսկ աղջիկը յերեսուն է... — ինձ թվում է, վոր որիորդը նրան կգնար:

Ինչէր ասես չեն անում ձանձրութից մեղ մոտ, պրովինցիայում (գավառում), ինչքան անկարեւոր, անմիտ բաներ: Յեւ այդ նրա համար, վոր բոլորովին չի արվում այն, ինչ վոր հարկավոր է: Դե մեր ինչի՛ն եր պետք հանկարծ ամուսնացնել այդ Բելիկովին, վորին նույնիսկ յերեակայել չեր կաշելի ամուսնացած: Դիրեկտորի կինը, տեսչի կինը և մեր գիմնադիայի բոլոր կանայք աշխուժացան, նույնիսկ լավացան, կարծես նոր միայն տեսան կյանքի նպատակը: Դիրեկտորի կինը թատրոնում տոմսակ է վերցնում, և տեսնում ենք՝ նրա ռիթմիկում նստած է Վառենկան մի տեսակ հովհարով, պայծառ ու յերջանիկ, իսկ նրա կողքին — Բելիկովը փոքրիկ, կծկված, կարծես նրան տնից ունեւիրով են դուրս քաշել: Յես հրավեր եմ սարքում, և կանայք պահանջում են, վոր յես անպատճառ հրավիրեմ և Բելիկովին և Վառենկային: Մի խոսքով, մեքենան աշխատում էր: Բանից դուրս յեկավ, վոր Վառենկան դեմ չէր մարդու գնալու: Ապրել իր յեղբոր մոտ այնքան եւ ուրախալի չէր: Նրանց բան ու գործն որերով վիճել ու կռիւ անելն էր: Ահա ձեղ մի տեսարան. գնում է կովալենկոն փողոցով, բարձրահասակ, առողջ մի հսկա տղամարդ, ասեղնագործ վերնաշապիկը հագին, մագերի փունջը զլխարկի տակից ձակատին թափված.

մի ձեռքում գրքերի կապոցն է, մյուս ձեռքում հաստ, վոս-
տաշատ ձեռնափայտը: Նրա հետեից գնում է քույրը, նույն-
պես գրքերով:

— Ախր դու, Մելայիլիկ, այդ չես կարդացել, — վիճում
է նա բարձր ձայնով: — Յես քեզ ասում եմ, յերդվում եմ,
դու այդ բոլորովին չես կարդացել:

— Իսկ յես քեզ ասում եմ, վոր կարդացել եմ, — բղա-
վում է Կովալենկոն, ձեռնափայտը մայթին խփելով:

— Ախ, տեր իմ աստված. Մինչիկ, դու ինչո՞ւ յես բար-
կանում, ախր մեր խոսակցությունն սկզբունքային է¹:

— Իսկ յես քեզ ասում եմ, վոր կարդացել եմ, — բղա-
վում է Կովալենկոն ավելի բարձր:

Իսկ տանը, յեթե վորեւէ կողմակի մարդ պատահի, իս-
կույն ծայր է առնում կռիվը: Այդպիսի կյանքը, հավանա-
բար, ձանձրացրել էր նրան: Նա ցանկանում էր ունենալ
իր անկյունը. նկատի յեր ունենում նաև տարիքը. ջոկելու
ժամանակն արդեն անցել է, ու՛մ հետ ել լինի՝ կամուսնանա,
նույնիսկ հունարեն լեզվի ուսուցչի հետ: Յե՛վ այն էլ պետք
է ասել, վոր մեր որիորդների մեծամասնությունը պատրաստ
է ամուսնանալ ու՛մ հետ ել վոր լինի, միայն թե ամուսնանա:
Ինչեւէ, Վառենկան սկսեց մեր Բելիկովին ցույց տալ բա-
ցահայտ բարեհաճություն:

Իսկ Բելիկովը: Նա Կովալենկոյի մոտ ել էր հաճախում
այնպես, ինչպես և մեզ մոտ: Կդար Վառենկայի մոտ ու լուռ
կնստեր: Նա լուռ է, իսկ Վառենկան յերգում է նրա համար
«Փչում են քամիները», կամ մտածկոտ նայում է նրան իր
թուխ աչքերով, կամ հանկարծ սրտանց ծիծաղում է.

— Հա՛-հա՛-հա՛:

Սիրային գործերի և հատկապես ամուսնության մեջ
մեծ դեր է խաղում ներշնչումը: Բոլորը, և՛ ընկերները
և՛ կանայք, սկսեցին հավատացնել Բելիկովին, վոր նա պետք
է ամուսնանա, վոր նրան այլևս վոչինչ չի մնում կյանքում,
քան ամուսնանալը: Մենք ամենքս շնորհավորում եյինք նրան,
լուրջ կերպարանքով ասում եյինք այնպիսի հիմարաբանու-
թյուններ, ինչպես, որինակ՝ ամուսնությունը լուրջ քայլ է.
միևնույն ժամանակ Վառենկան տգեղ չէր, գրավիչ էր, նա
պետական խորհրդականի՝ աղջիկ էր և ունէր ազարակ, իսկ
վոր գլխավորն է, նա առաջին կինն էր, վոր նրան
վերաբերվեց սիրալիր, սրտանց: Նրա գլուխը պտտվեց ու նա
վորոշեց, վոր իրեն իսկապես հարկավոր է ամուսնանալ:

— Այ, հենց այդտեղ ել պետք էր վերցնել նրանից կրկ-
նակոշիկներն ու հովանոցը, — ասաց Իվան Իվանիչը:

— Յերևակայեցե՛ք, այդ անկարելի յեղավ: Նա ի՞ն-
չ սեղանի վրա դրեց Վառենկայի նկարը և շարունակ գալիս
էր ինձ մոտ ու խոսում էր Վառենկայի մասին, ընտանեկան
կյանքի մասին, այն մասին, թե ամուսնությունը լուրջ
քայլ է. հաճախ լինում էր Կովալենկոյի մոտ, բայց ի՞նչ ապ-
րելակերպը մազաչափ չփոխեց: Այլ ընդհակառակը, ամուս-
նանալու վորոշումը նրա վրա ազդեց ինչ-վոր հիվանդագին
կերպով. նա լղարեց, գունատվեց, և թվում էր, վոր ավելի
խոր մտավ իր պատյանի մեջ:

— Վառվառա Սավվիչնան ինձ դուր է գալիս, — ասում
էր նա ինձ թույլ, կեղծ ժպիտը յերեսին, — և յես՝ զիտեմ,
ամուսնանալն անհրաժեշտ է ամեն մարդու համար, բայց...
այս բոլորը, դուք հո գիտե՛ք, պատահեց միանգամայն հան-
կարծ... Պետք է մտածել:

¹ Պետական խորհրդական — քաղաքացիական պաշտոնյայի չին (աս-
տիճան (ցարական Ռուսաստանում):

¹ Սկզբումբային — հիմնական տեսակետն աչքի առաջ ունեցող:

— Ել ի՞նչ մտածելու բան կա, — ասում եմ, — նրան: — Ամուսնացե՛ք, պրծա՛վ-զնաց:

— Վո՛չ, ամուսնությունն ասածդ լուրջ քայլ է, հարկավոր է առաջուց կշռադատել գալիք հանգամանքները, պատասխանատվությունը... վորպեսզի հետո ուրիշ բան դուրս չգա: Այդ ինձ սաստիկ անհանգստացնում է, յես հիմա գիշերները բոլորովին քուն չունեմ: Յե՛վ, ճիշտն ասած, վախենում եմ: Նա ու յեղբայրն ինչ վոր տարրորինակ մտքերի տեր մարդիկ են, նրանց դատողությունները, այսպես ասած, ինչ վոր տարրորինակ ձև ունեն. բնավորությամբ ել շատ խիզախ են: Կամուսնանաս, իսկ հետո, մեկ ել տեսար, փորձանքի մեջ կընկնես:

Յե՛վ նա առաջարկությունն չեր անում, միշտ հետաձգում եր, մեծ տհաճություն պատճառելով դիրեկտորի կնոջն ու մեր բոլոր կանանց, շարունակ ծանր ու թեթեւ եր անում իր առաջիկա պարտականություններն ու պատասխանատվությունը և, չնայելով դրան, համարյա ամեն օր դրոսնում եր Վառենկայի հետ. թերեւ մտածում եր, վոր այդ այդպես է հարկավոր իր դրության մեջ, և գալիս եր ինձ մոտ, վորպեսզի խոսի ընտանեկան կյանքի մասին: Յե՛վ ամենայն հավանականությամբ նա վերջիվերջո առաջարկությունն է կաներ, և իրականացած կլիներ այն անպետք, անմիտ ամուսնություններից մեկը, վորոնք օտդի յեն ունենում մեզ մոտ ձանձրությունից ու պարապությունից հազարներով, յեթե հանկարծ չպատահեր մի խոշոր սկանդալ: Պետք է ասել, վոր Վառենկայի յեղբայրը՝ Կովալենկոն սկսեց ատել Բելիկովին իր ծանոթության հենց առաջին օրվանից ու տանել չեր կարող նրան:

— Չեմ հասկանում, — ասում եր նա մեզ, ուսերը վեր քաշելով, — չեմ հասկանում, ինչպես եր դուք տանում այդ

մատնիչին, այդ զգվելի ռեխին: Ե՛հ, պարոններ, ի՞նչպես եք կարողանում դուք այստեղ ապրել: Մթնոլորտը ձեզ մոտ խեղդուկ է, ապականված: Մի՛թե դուք մանկավարժներ եք, ուսուցիչներ եք: Դուք չինապաշտներ եք, ձեր դպրոցը գիտության տաճար չե, այլ վոստիկանության վարչություն, վորտեղից թթու հոտ է գալիս, ինչպես վոստիկանական բուրեղայից: Վո՛չ, յեղբայրներ, մի փոքր ել կապրեմ ձեզ հետ, ապա կգնամ ագարակս, կսկսեմ այնտեղ խեցգետին վորսալ ու խախոլ յերեխաներին սովորեցնել: Կգնամ, իսկ դուք մնացեք այստեղ ձեր չուղայի հետ, թո՛ղ նա պայթի:

Կամ նա արտասովոր չափ քրքրջում ու քրքրջում եր մերթ բաս, մերթ բարակ, ծղրտացող ձայնով ու, ձեռքերը թափահարելով, հարցնում եր ինձ.

— Ինչի՞ յե նստում նա ինձ մոտ: Ի՞նչ է հարկավոր նրան: Նստում ու նայում է: Նա մինչև անգամ «ցեց» կամ «սարդ» եր անվանում Բելիկովին: Մենք, իհարկե, խուսափում եյինք խոսել նրա հետ այն մասին, թե նրա քույրը Վառենկան պատրաստվում է ամուսնանալ այդ «սարդի» հետ: Ու յերբ մի անգամ դիրեկտորի կինն ակնարկեց նրան, վոր լավ կլիներ, յեթե նրա քույրն ամուսնանար այնպիսի մի պատկառելի, ամենից հարգված մարդու հետ, վորպիսին Բելիկովն է, նա նոթերը կիտեց ու մրթմրեց:

— Այդ իմ գործը չե: Ուզում ե՞՜ս ոճի հետ ամուսնանալ, յես չեմ սիրում ուրիշների գործերին խառնվել:

Այժմ լսեցեք, թե ինչ յեղավ հետո: Ինչ-վոր մի չարաճըճի ծաղրանկար եր արել. — կրկնակողիկները հագին գնում է Բելիկովը, շալվարի ծայրերը վեր ծալած, հովանոցը բաց արած, իսկ նրան թեվանցուկ՝ Վառենկան. ներքևում այսպիսի մակազրություն՝ «սիրահարված անթրոպոսը»: Դեմքի արտահայտությունը զարմանալի կերպով հաջող եր դուրս

յեկեբ: Նկարիչը, հավանաբար, շատ գիշերներ եր աշխատել, վորովհետև արական և իգական գիմնազիաների բոլոր ուսուցիչները, սեմինարիայի ուսուցիչները, չինոֆիլները, բոլորն ել մեկ-մեկ որինակ ստացել եյին: Ստացել եր և ինքը Բելիկովը: Ծաղրանկարը նրա վրա թողել եր ամենաժանր սպաւորութիւն:

Մենք միասին դուրս ենք գալիս տնից, — այդ ճիշտ մայիսի մեկն եր, կիրակի, և մենք, բոլոր ուսուցիչներս ու գիմնազիստները, պայմանաւորովել եյինք հավաքովել գիմնազիայի մօտ և վոտքով գնալ քաղաքից դուրս, պուրակը, — մենք դուրս ենք գալիս, բայց նա իր կանաչավուն դեմքով ամպից ել մտայլ ե:

— Ինչպիսի՞ ստոր, չար մարդիկ կան, — ասաց նա, ու նրա շրթունքները դողդողացին:

Յես մինչև անգամ խղճացի նրան: Գնում ենք, հանկարծ, կարո՞ղ եք պատկերացնել, հեծանիվով սլանում ե Կովալենկոն և նրա հետ Վառենկան, նույնպես հեծանիվի վրա, կարմը փած, հոգնած, բայց և ուրախ, գլարթ:

— Իսկ մենք, — կանչում ե նա, — առաջ ենք գնում: Ի՞նչ լավ յեղանակ ե, ուղղակի սարսափելի յե:

Ու յերկուսն ել անհետացան: Իմ Բելիկովի կանաչ դեմքն սպիտակեց, և նա կարծես քարացաւ: Կանգ առնելով՝ նայեց ինձ.

— Ներեցեք, այդ ի՞նչ եր, — հարցրեց նա: — Կամ գուցե տեսողութիւնս ինձ խաբեց: Միթե գիմնազիայի դասատուներին և կանանց վայել բան ե հեծանիվով շրջելը:

— Ի՞նչ անվայել բան կա այստեղ, — ասացի յես: — Յեկ թող զրօսեն իրենց քեֆին:

— Բայց ի՞նչպես կարելի յե, — կանչեց նա դարմանալով իս հանգստութեան վրա: — Այդ ի՞նչ եք ասում:

Յեկ նա այնքան ապշած եր, վոր այլևս չուզեց հեռու գնալ ու տուն վերադարձաւ:

Հետեյալ որը նա ամբողջ ժամանակ ջղայնաբար ձեռքերն եր շփում. դեմքից յերևում եր, վոր նա վատ ե զգում իրեն: Յեկ պարապմունքն ել չշարունակեց, մի բան, վոր նրա կյանքում առաջին անգամն եր պատահում: Ծաղ ել չկերաւ: Իսկ յերեկոյան դեմ հագնվեց ավելի տաք, թեև դուրսը բոլորովին ամառային յեղանակ եր, և ծանր քայլերով գնաց Կովալենկոների մօտ: Վառենկան տանը չեր, և նա հանդիպեց այնտեղ միայն յեղբորը:

— Նստեք, խոնարհաբար խնդրում եմ, — ասաց Կովալենկոն սառնորեն և հոնքերը կիտեց: Նրա դեմքից յերևում եր, վոր քնաթաթախ ե. ճաշից հետո հենց նոր եր հանդըստացել, ու տրամադրութիւնը չափազանց վատ եր:

Բելիկովը տասը բոպի չափ լուռ նստեց և սկսեց.

— Յես ձեզ մօտ եմ յեկել, վորպեսզի հոգիս թեթևացնեմ: Յես շատ ծանր եմ զգում ինձ: Պասկվիլանտի¹ մեկը ծաղրելի դրութեամբ նկարել ե ինձ և ելի մեկին, վորը մեզ յերկուսիս ել մօտ մարդ ե: Պարտք եմ համարում հավատացնել, վոր յես այստեղ մեղավոր չեմ... Յես վոչ մի առիթ չեմ տվել այդպիսի ծաղրանքի, այլ, ընդհակառակը, ամբողջ ժամանակ ինձ պահել եմ իբրև կատարելապես որինավոր մարդ:

Կովալենկոն նստել եր դունչը կախած և լուռ եր: Բելիկովը մի քիչ սպասեց և հանդարտ, վշտահար ձայնով շարունակեց.

— Յես մի ուրիշ բան ել ուզում եմ ասել ձեզ: Յես վաղուց եմ ծառայում, իսկ դուք դեռ նոր եք սկսում ծառա-

¹ Պասկվիլանտ — վերաւորանքներ և ստեր հորինող (Մ. Թ.).

յությունը, և, իբրև մեծ ընկեր, յես պարտք եմ համարում ձեզ նախազգուշացնել: Դուք զբոնսում եք հեծանիվով, իսկ այդ զվարճությունը միանգամայն անվայել բան է յերիտասարդության դաստիարակի համար:

— Բայց ինչո՞ւ, — հարցրեց Կովալենկոն իր բառ ձայնով:

— Մի՞թե աշատեղ ղեռ բացատրելու կարիք կա, Միխայիլ Սավվիչ, մի՞թե դա հասկանալի չէ: Յեթե ուսուցիչը հեծանիվ է նստում, ապա թո՛ւ է մնում աշակերտուերին: Նըբանց կմնա միայն գլխի վրա քայլել: Յե՛վ քանի վոր այդ չի թույլատրված շրջաբերականով¹, ապա ուրեմն չի կարելի: Յերեկ յես սարսափեցի: Յերբ յես տեսա ձեր քրոջը, աչքերս մթնեցին: Կինը կամ որիորդը հեծանիվի վրա — դա սարսափելի յե:

— Իսկապես ի՞նչ եք ուզում դուք:

— Յես ուզում եմ միայն մի բան — նախազգուշացնել ձեզ, Միխայիլ Սավվիչ: Դուք յերիտասարդ մարդ եք, ձեր ապագան ղեռ ձեր առջևումն ե. պետք է ձեզ պահեք շատ, շատ զգուշ, իսկ դուք այս մասին այնքան անփույթ եք, ո՛ր, այն քան անփույթ: Դուք ման եք գալիս ասեղնադրծած վերնաշապիկով, փողոցում շարունակ ինչ-վոր գրքերով, իսկ հիմա յե՛լ ահա հեծանիվ: Վոր դուք և ձեր քույրն զբոսնում եք հեծանիվով, կիմանա դիրեկտորը, հետո կհասնի հոգաբարձուին...: Իսկ ոգո՞ւտն ինչ:

— Վոր յես և իմ քույրս հեծանիվով ենք գրոսնում, վո՛չ վոքի գործը չե — ասաց Կովալենկոն ու շառագունեց: — Իսկ ո՞վ վոր կխառնվի իմ ընտանեկան գործերին, յես նրան և՛ անհատակը կվռնտեմ:

Բելիկովը գույնը նետեց ու վեր կացավ:

¹ Շրջաբերական — այն կարգադրությունները, վորոնք ուղարկում են ստորագրած հիմնադրույթին կամ անձերին.

— Յեթե դուք ինձ հետ խոսում եք այսպիսի տոնով, ապա ուրեմն յես չեմ կարող շարունակել, — ասաց նա: — Յե՛վ հետո, խնդրում եմ, իմ ներկայությամբ յերբեք այդպես չարտահայտվել պետերի մասին: Դուք պետք է հարգանքով վերաբերվեք դեպի իշխանությունները:

— Իսկ մի՞թե վորևե բան ասացի իշխանությունների մասին, — հարցրեց Կովալենկոն, չարությամբ նայելով նրան — խնդրեմ, ինձ հանգիստ թողեք: Յես մաքուր մարդ եմ և այնպիսի պարոնի հետ, ինչպիսին դուք եք, չեմ ցանկանում խոսել: Յես չեմ սիրում մատնիչներին:

Բելիկովը ջղայնաբար ձեռ ու վոտ արեց և սկսեց արագ հագնվել, սարսափի արտահայտությունը դեմքի վրա: Ախր այդ առաջին անգամն էր իր կյանքում, վոր այդպիսի կոպտություններ էր լսում նա:

— Կարող եք ասել, ինչ վոր ձեզ հաճելի յե, — ասաց նա, նախասնեյակից դուրս գալով սանդուխքի գլուխը: — Յես միայն պետք է նախազգուշացնեմ ձեզ. դուցե վորևե մեկը լսեց մեզ և, վորպեսզի մեր խոսակցությունն այլ մեկնություն չտան, ու, տակից ուրիշ բան դուրս չգա, յես պետք է մեր դիրեկտորին հաղորդեմ մեր խոսակցության բովանդակությունը... գլխավոր գծերով: Յես պարտավոր եմ այդ անել:

— Հաղորդե՛լ: Գնա՛, հաղորդի՛ր:

Կովալենկոն հետևից բռնեց նրա ոձիքն ու հրեց, և Բելիկովը սանդուխքից ցած գլորվեց՝ իր կրկնակոշիկները թխկթխկացնելով: Սանդուղքը բարձր էր ու թեք, բայց նա անփսաս կերպով վար գլորվեց, վոտքի կանգնեց և ձեռքերով քիթը շփեց՝ արդյոք ակնոցները չե՞ն փլասվել: Սակայն հենց այն ժամանակ, յերբ նա սանդուխքից ներքև էր գլորվում, ներս մտավ Վառենիկան, հետն ել յերկու կին. նրանք ցածում կանգնած՝ նայում էյին, և Բելիկովի համար այդ

ամենից սարսափելին եր: Ավելի լավ եր՝ ջարդած լինե՞ր վերջն ու յերկու. վտառները, քան ծաղր ու ծանակի առարկա դառնար. չէ՞ վոր այժմ ամբողջ քաղաքը կիմանա, կհասնի գիրեկտորի, հոգաբարձուի ականջը, — ախ, չլինի՞ տակից ուրիշ բան դուրս գա, — կնկարեն մի նոր ծաղրանկար, ու այս բոլորը կվերջանա նրանով, վոր կհրամայեն հրաժարա- կան տալ...

Յերբ նա վեր կացավ, Վառենկան ճանաչեց նրան ու նայելով նրա ծիծաղելի դեմքին, արորոված վերաբերւին, կրկ- նակոշիկներին, չհասկանալով, թե բանն ինչն է և յին- թաղերով, վոր նա ինքն է վայր գլորվել հանկարծակի կեր- պով, անկարող յեղավ զսպել իրեն ու տոնով մեկ սկսեց քրքշալ:

— Հմ-հմ-հմ:

Յեւ այդ վորոտալից հոհոցով ամեն ինչ վերջացավ, և՛ նշանդրեքը, և՛ Բելիկովի յերկրային գոյութիւնը: Նա ալլևս չլսեց, թե ինչ եր ասում Վառենկան, ու վոշինչ չտեսավ: Վե- րադառնալով տուն, նա ամենից առաջ սեղանի վրայից վերց- րեց նկարը, իսկ հետո պառկեց ու այլևս տեղից չվերկացավ:

Յերեք որ անց ինձ մօտ յեկավ Աֆանասին ու հարցրեց՝ կարիք չկա՞ արդո՞ք գնալ բժշկի հետից, վորվհետե իր տի- րոջ հետ, ասում ե, ինչ-վոր բան է կատարվում: Յես գնացի Բելիկովի մօտ: Նա պառկած եր առաքատի տակ, վեր- մակով ծածկված, լուռ եր: Հարցմունքիս՝ նա միայն «այո» կամ «վոշ» ե արտասանում, և այլևս վոշ մի ձայն: Նա պառ- կած ե, իսկ նրա շուրջը թափառում ե Աֆանասին՝ մռայլ, խոժոռ դեմքով, և խորը հառաչում ե. իսկ նրանից ողու հոտ ե գալիս, ինչպես ողեսնից:


Մի ամսից հետո Բելիկովը մեռավ: Նրան թաղեցինք մենք բոլորս, այսինքն յերկու. գիմնազիան և սեմինարիան: Այժմ,

յերբ նա պառկած եր դագաղում, նրա դեմքի արտահայ- տութիւնը հեղ եր, դուրեկան, նույնիսկ զվարթ, կարծես նա ուրախ եր, վոր վերջապես նրան դրեցին մի պատյանի մեջ, վորից նա յերեք ալլևս դուրս չի գա: Այո, նա հա- սմվ իր իդեալին: Յեւ թաղման ժամանակ, կարծես ի պա- տիվ նրա, մթազնած, անձրեւոտ յեղանակ եր, և մենք ամենքս ել կրկնակոշիկներով եյինք ու հովանոցներով: Վա- ռենկան նույնպես ներկա յեր թաղմանը ու, յերբ դագաղը հողն եյին իջեցնում, նա արտասուեց: Յես նկատել եմ, վոր խախուռհինները կամ միայն լալիս են կամ քրքշում, իսկ միջակ տրամադրութիւն նրանք չեն ունենում:

Սոստովանում եմ, Բելիկովի նման մարդկանց թաղելը մեծ բավականութիւն ե: Յերբ մենք վերադառնում եյինք հանգստարանից համեստ և տխուր դեմք ունեյինք: Վոշ վոք չիր ուղում արտահայտել բավականութեան զգացումը, մի զգացում, վոր մենք ունեցել եյինք վաղուց, շատ վաղուց, դեռ մանկութեան որերին, յերբ մեծերը գնում եյին տնից, և մենք մի յերկու ժամ վաղվում եյինք պարտիզում, վա- յելիով լիակատար ազատութիւն: Ախ, ազատութիւն, ազա- տութիւն: Նրա հնարավոր լինելու նույնիսկ մի ակնարկը, նույնիսկ մի թույլ հույսը թե եր տալիս հոգուն, այնպես չէ՞:

Հանգստարանից վերադարձանք լավ տրամադրութեամբ: Բայց անցավ վոշ ավելի քան մի շաբաթ, և կյանքը հոսեց առաջվա պես, նույնքան դաժան, հոգնեցնող, անիմաստ, շրջաբերականներով չարգելված, բայց և լիապես չթուլա- տրված մի կյանք: Ավելի լավ չդարձավ այն: Յեւ իսկա- պես, Բելիկովին թաղեցինք, բայց դեռ ինչքան պատյանի միջի մարդիկ մնացին, դեռ ինչքան ել կլինեն նրանք:

— Հենց այդ ե, վոր կա, — ասաց Իվան Իվանիչը և վա- ռեց իր չիբուխը:



— Դեռ ի՜նչքան ել կլինեն նրանք, — կրկնեց Բուրկինը: Գիմնազիայի ուսուցիչը մարագից դուրս յեկավ: Նա շատ բարձր հասակով մարդ չէր, հաստ, բոլորովին ձալաւտ. նրա սև մորուքը համարյա մինչև գոտուն եր հասնում. նրա հետ դուրս յեկան յերկու շները:

— Լուսինը, լուսինը, — ասաց նա, նայելով վերև:

Արդեն կես գիշեր էր: Աջ կողմում յերևում եր ամբողջ գյուղը. յերկար փողոցը ձգվում եր հեռու, հինգ վերստաչափ յերկարությամբ: Ամեն ինչ խորաքուզված էր լուռ, խոր քնի մեջ. վոչ շարժում, վոչ ձայն: Նույնիսկ չի կարելի հավատար, վոր բնության մեջ կարող ե լինել այդպիսի լուռություն: Յերբ նույնիսկ գիշերով տեսնում ես գյուղական լայն փողոցն իր խրճիթներով, գեղերով, քնած ուռիներով, հոգիդ հանդարտվում ե. աշխատանքներից, հոգսերից ու վշտից թափնվելով գիշերային սովերի մեջ, փողոցը հեղ ե, վշտահար ու գեղեցիկ, և թվում ե, վոր աստղերն ևս նայում են նրան փաղաքշանքով և գուրգուրանքով և վոր այս չարիք չկա յերկրի վրա ու ամեն ինչ բարեհաջող ե: Ձախ կողմը, գյուղի ծառից դաշտն եր սկսվում. նա յերեւում եր հեռու, մինչև հորիզոնը, և այդ դաշտի ամբողջ լայնությամբ, վոր վողողված ե լուսնի լույսով, նույնպես չկա վոչ շարժում, վոչ ձայն:

— Հենց այդ ե, վոր կա, — կրկնեց Իվան Իվանիչը: Իսկ միթե այն, վոր մենք ապրում ենք քաղաքում, ապականված ողի և նեղվածության մեջ, գրում ենք անպետք թղթեր, վիճա¹ ենք խաղում, — միթե դա պատյան չե: Իսկ այն, վոր մենք մեր ամբողջ կյանքն անց ենք կացնում անգործների, կռվասերների անխելք, պարապ կանանց միջև,

ասում և լսում ենք դանազան դատարկաբանություններ — միթե դա պատյան չե: Այ, թե վոր ուզում եք, յես ձեզ կպատմեմ մի շատ խրատական պատմություն:

— Վոչ, արդեն քնելու ժամանակ ե, — ասաց Բուրկինը: — Մինչև վաղը:

Յերկուսն ել գնացին մարագ ու պառկեցին խոտի վրա: Յեւ արդեն յերկուսն ել ծածկվել էյին ու նիւհում, յերբ հանկարծ լսվեց թեթև վոտնաձայն՝ տուպ, տուպ... Մարագից վոչ հեռու մեկը շրջում եր. քայլում եր մի քիչ, ապա կանգ առնում, իսկ մի ըոպեյից՝ նորից տուպ, տուպ, տուպ: Շները հաջեցին:

— Այդ Մավրան ե ման դալիս, — ասաց Բուրկինը:

Գայելը լռեցին:

— Տեսնել ու լսել, թե ինչպես են ստում, — ասաց Իվան Իվանիչը, մյուս կողքի վրա շուռ գալով, — և քեզ ել հիմար են անվանում այն բանի համար, վոր դու հանդուրժում ես այդ սուտը. կրի՛ր վիրավորվանքներ, ստորացումներ, համարձակություն մի՛ ունեցիր բացարձակ հայտարարելու, վոր դու ազնիւ, ազատ մարդկանց կողմն ես, և ինքդ ել ստի՛ր, ժպտն, ու այդ ամենը մի պատառ հացի համար, տաք անկյուն ունենալու համար, ինչ վոր փոքրիկ չին ստանալու համար, վորի գինը մի գրոշ ե, — վոչ, վոչ, այլևս այդպես ապրել անկարելի յե՛:

— Նու, այդ արդեն ուրիշ ոպերայից ե, Իվան Իվանիչ, — ասաց ուսուցիչը: — Յեկեք քնենք:

Յեւ տասը ըոպե անցած Բուրկինն արդեն քնել եր: Իսկ վիճա¹ Իվանիչը շարունակ շուռ եր դալիս մի կողքից մյուսը և հառաչում եր, հետո վեր կացավ, նորից դուրս յեկավ և, դռան մոտ նստելով, վառեց իր չիբուխը:

¹ վիճա — թղթախաղի մի տեսակ.



Ответ. редактор Г. А. Потенц
Пом. техред. Д. М. Джинибалаян

Издание № 4874747 - X. Сдано в набор 4 ноября 1935 г. Подпи-
сано в печать 19 декабря 1935 г. Формат—Б6 (125x146), Объем
1¹/₄ п. л. (70.000 зн. в. 1 б. л.) Тираж 1500. Уполк. райлит Р—2457
Заказ 5226.

Типография им. Стачки 1902 года в г. Ростов н.Д.,

ՀՀ Ազգային գրադարան



NL0316427

2212

ՀԱՆՔ 35 ՀԱՊ.
Цена 35 коп.

На армянском языке

А. П. ЧЕХОВ

ЧЕЛОВЕК В ФУТЛЯРЕ

**АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО**
Ростов н-Д Буденновский пр. № 30

Դ. ՐԱՊԱՀԵՍԵԸ
Ռոստով-Դոն Մոսկովսկայա № 30
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)